



891.99

Հ-64



- 6 NOV 2011



ԽԵՍ ՎՈՎ Ձ.

1920-38

891.99
Ը-64

ՀԱՎԱՆԱՆԵՍ ՏԻՐԱԶ

ԳԱՐԵԱՆԱՄՈՒՏ

ԱԼԱԿԱՆԻ
ՏԱՐԱՎԻ

~~ՀԱՎԱՆԱՆԵՍ ՏԻՐԱԶ~~
ՀԱՎԱՆԱՆԵՍ ՏԻՐԱԶ

ՊԵՏՏԱՐԱՍ

ՅԵՐԵՎԱՆ 1935 ՄՈՍԿՎԱ

15 JUL 2013

97702

Տեխ. խմբ. Հ. ՔԱՐԱՄԵՑԱՆ
Սուպերը և շապիկը՝ Ս. ԱԼԵՎԱԼՅԱՆԻ

* *

Տիտուր-արտուր այն փողոցից, մրստ խցից յես նոր հասա,
իմ մանկության բեռք թողած, — այս մեծ գետին փրփուր հասա:

Հոնքերիս տակն արեն առած, մթին հովտից յես սարն հասա,
Կայծակներով զինավառված լույս աշխարհի կատարն հասա:

Դորշ որերի խոնավ խցից բարձրանալով յես նոր հասա,
Մոայլ ու թին որերն անցան. թե ինձ կանչեն, — իզմոր, — ասա:

Հին աշխարհի արնածարավ ու փշրված որին հասա:
Այստեղ, բարձրում՝ քրտնատարափ յես արեի հրին հասա:

22.20
38

* * *

Սյս ձորիբում — մանուկ իմ որիբում տնցած
Մի հավք սպանեցի ու սիրոս մդկտաց...
Հիմա նորից յեկել ու գիտում իմ, — ձորում
Հազար արեներով ջրի լույսն և ծորում,
Յեզ լարիբում ձգվող՝ լույսի վազքը զրկած
Սլանում են հոգուս կրակները շիկնած, —
Վոր լեռներում հեռու, հովիտներում վերջին,
Խրճիխներում վառենք կրակները մեր ջինջ:

* * *

Ուր միշտ լսում են ազմուկ ու փորսա,
Ուր՝ ժայռը սպայթում...
Քրտինքն և կաթում,
Ուր հսկաների՝ ամեն առավոտ
Նոր ծնունդներ են լույսերն ավետում,
Այնտեղ և յերգում ջահել իմ հոգին —
Այն հսկաների գարկող մոլեզին...

ԽՈՀԵՐԻՄ ՀԵՏ

Լոռւմ եմ քաղցր յերգեր ու վորոտ,
Կասուցող որվա կոփի ու հանդես,
Յեվ աչքերիցո յերկու առավոտ,
Յերկու արե են բարձրանում կարծես |

ԴԱՍԱԿԱՐԳԻՄ ԱԶՔԵՐԸ

Մեր աչքերը, վոնց լեռներից վար նայող
Հաղար ու բյուր արծիվների աչքերը,
Վորոնք իրենց կայծակնազարկ սրերով —
Դլխատել են ճին աշխարհն ու քաջքերը:

Մեր աչքերում բախտն է ցոլում աշխարհի, ✓
Ինչպես արտի վոսկին՝ անափ դաշտի մեջ,
Ինչպես վճիռ հորիզոնում՝ վիթխարի
Նոր բարձրացող արեգակի գունդն անշեց:

Հիշած ես՝ կյանքը այն տերեաթափ
Անտառի նման տիուր եղ ու մերկ,
Այսոր՝ ծաղկում են հանդ, արսու ու տափ,
Արեն և ցոլում գիշեր ու ցերեկ:

Ու միշտ խնդառատ ծափ ու ծիծաղով
Մաղկում ե կյանքը յերկունքի մաղով:

1

Ահեղ ջրվեժն ե շառաչով իջնում,
Արեն ե խաղում անդունդի վրա.
Անդուլ ջրերի զվարթ խոխոջում՝
Այնտեղ ջաղացն ե մաշում որն իրաւ
Արդեն թերվել են պատերը խարխուր,
Ալեր պապիս մեջքի պես ահա,
Անհանգիստ կանչով ջրերն ամենուր
Անխոնջ քանդում են հիմքերը նրաւ:

2

Ահա, այդ ձորում բարձրացել ե նա՝
Անդուլ ձեռքերի յեռանդը սրտում,
Արշալույս ծնող մի վսիմ հսկաւ,
Անմեռ ազմուկով զնդում ե ձորում:
Ամեն որ յերգում ու ծնում ե նա
Անհուն լույսերի գետեր վոսկեգույն,
Արեն ե խաղում անդունդի վրա
Յեկ լույս թհերով ջրերը գրկում:

ՊԵՑԶԱԺ

(ՏԵՐԱՄԻԼՈՒՄ)

Հոսում ե թելը՝ լուսնի լույսի պես,
Բամբակն ե փթթում ձյունի ժպիտով.
Շուրջը՝ խանդակառ կոիվ ու հանդես,
Թելերն են վազում իլեկի գոտով:

Ճերմակ վարդերի պարտեզ ե կարծես,
Թե այստեղ բուսավ արտը բամբակի.
Ու նման ամռան գետի փրփրադեզ՝
Թելի խրձերն են հոսում մոլեղին:

Յեղ այդ թելերը կազում են հիմա՝
Սյուրվա խենցը գալիք որվա հետ.
Ու բացում մի լայն, արծաթե ճամբա,
Վոր սոցիալիզմը ընթանա հավետ:

Ճերմակ վարդերը՝ փրփուր, ձյունի պես,
Սպիտակ ծաղկանց մարդեր են կարծիս:

ՔԱՂԱՔԻ

Խրճիթ ու անակ արել վոտնատակ,
Ինչ լավ ե կանգնել բաղաքն հոյաշեն:
Արփաչայն անուշ վուլած վոտքի տակ
Շուրջն հասուն արտեր լիքը զյուղ ու շեն:

Դեմ Ալազյազի ժպիտը սառած,
Բաղաքն ե յենում նոր թեկր առած:

2220
38

ԱՅԼ և ԳԵՂՈՒՆ

... Այլ և զեղոն,
Մեր աշխարհի սիրաը վորովեա
Հրաբորքոք փայլ և զեղոն:
Աշխարհները իրաք կապող՝
Սուրհանզակի քայլ և զեղոն:

... Այլ և, այլ և, այլ և զեղոն:
Հրապայծառ զալիքների
Պայծառություն, փայլ և զեղոն,
Սոցիալիզմի մեր մեծ ճամբին
Հաղթանակի քայլ և զեղոն:

Թանգարանում, սիրով՝ ՆՈՐԵՆՑԻՆ

Յեղա աշխարհում վսեմ արվեստի,
Հին-հին մայիսները, վարդեր հինավուրց, ()
Ուր հիշատակի յերթը զարերի
Խուլ հոնդյունով հանդել և վաղուց...
Յեկ հոգուս խորքում կյանք առած յելան
Աշխարհի մեծերն իրենց հանձարով, —
Ինչպես սրերը՝ նոր մտնեն պատյան
Զքացան նրանք դանդաղ անվրտով —
Պատյան դնելով սերունդներն անցած:
Յեկ նրանց հանդեպ՝ տեսա սլացիկ
Մեր նոր աշխարհի փառքը քանդակված,
() Սասիսների ողիս վսեմ, զեղեցիկ,
Լույսի, մարմարյա պատկներ կապած...

ԱՐՃԱԼՈՒՅՄԻ ՑԵՐԳՆ

Արշալույմն իրա լուսե մատներով՝
Մեր լուսամուտն և ծիծադով բաղխում,
Ճակատս շոյում մի քնքուշ հրով,
Հոնքերից զույգ արե և կախում:

Տանում և նա ինձ այնտեղ, ուր գվարի
Մեր նոր մարդկության սիրտն և բարախում,
Ուր պայքարի մեջ հրաշունչ ու վաս,
Մեր ապագան և կյանք առնում հախուան:

Մեր արշալույմն և իմ սիրտը բաղխում,
Հոնքերից զույգ աբեներ կախում:

ՑԵՐԵՎԱՆԻ ՇՈՂԲ

Ցեր սիրում եմ շողբ և բարի, և ահավոր,
Շողբ վոր նման, և գորովագութ մի մոր,
Վորի վասկե զրկում կանաչ կյանքն և աճում:
Ցեր սիրում եմ շողբ... ահա նըս պայծառ,
Արհային, բարի, վասկա որորոցում,
Մատաղ այգիները և արտերը անծայր,—
Ինչպես մանուկներն իրենց մոր զրկում՝
Կյանք են շնչում, յիշում, առնում հաստի,
Մկանի պես լցում, մեղրահյութով, գինով,
Բուրում ինչպես ծաղկով հյուսված պսակ...

Ցեր սիրում եմ շողբ հակինթացած խաղող —
Դու՝ ամառվա շողի հմայքն ևս ամբարել,
Ծծել ևս դու նրա ստինքը լուսաշող,
Վողողվել շաքարով ու մեղրով վարարել...
Ցեր սիրում քաղցր շողբ Ցերեանցան, —
Ցեր դանում և վոսկի ու համկերում խշում...
Ցերը ծառերը բոլոր խոնահում են կրկին
Ու դալարից հյուսված կողովներն են լցում,

Յես սիրում եմ շողը, վորն իր շնչով կրկին,
Խոստանում ե յերկրին տոստ աշուն...

Ահա շողը՝ վոսկյա զամբյուզներում անթիվ,
Իր հմայքն ե զիգել մեղրահացի նման,
Յետ ծոռւմ եմ նրա բույրը զիշեր ու տիվ,
Այդիներում մեր պիրճ համայնական:

Փոքրիկ, սիրուն, կայտառ ու կարմբաթուշ,
Աղջիկների նման ծիրան ու զեղձ, ու բար,
Կլոր բաժակներում նոտան զինին անուշ,
Չնաշխարհիկ խաղողն... ու վողջը՝ վոսկեփայր:

Յետ սիրում եմ շողը, յերբ իմ ջահել սրտին —
Արհեն իր վոսկեղեն նիզակներն ե փշրում,
Յերկանի շողը, վորի շնչով կրկին,
Խոստանում ե յերկրին տոստ աշուն:

Յերբ ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐԻ

Յերբ թախիծն ինձ ե նայում զողի ողիս,
Անհայտ ու տիուր իր մենաստանից,
Զինվում ե սիրոս ինզությամբ հրկիք,
Վոր հետու մհանի զողն իմ սահմանից:

Դեմս յելնում են հոկաները մեր,—
Հսկաներն հացին կաթի, յերկաթի,
Յեկ աղա՝ քանի հերոս ընկերներ,
Աչքերում անմեռ հրգեհն յեռանդի:

Յեկ սիրոս, վորսկո բազեն վանդակում՝
Աւրախությունից նոր թիեր առած,
Կրծքին վանդակի ճաղերն ե քանդում,
Հայացքն իմ յերկրի վերելքին հառած:

Ու միշտ լսում եմ վորոտն իմ սրտի՝ *(անելու)*
Ինչովեւ գետակի ձայնը ջաղացում,
Վոր խնդաշաղաղ հույզով կենդանի
Հողուոս սոցիսլիզմն ե նա կառուցում:

Դրա համար իմ լսում յես հիմա
իմ կրծքի տակից՝ սրտիս խոխոջը,
վոր ամեն զարկով ծիծաղում և նա
Բանալով կյանքիս գարնան բողբոջը:

Յեվ այդպես հիմա մեր նոր, յեռանդուն,
Մեր անդուզական, արև աշխարհում,
Այսորվա կովի գետակը հորդուն—
Վաղիա ջինջ որվա ովկյանն և բերում:

ԱՆՏԱՌԻ ԿԱԽԱՂԱՆԻ

1

Այնտեղ ծիծաղիստ վոքրիկ անակում,—
Ինչպես ծեր արծիվն իր քարոտ բնում,
Ուրախ նստել և մայրիկն ալեղարդ,
Թուիս հոնքերի տակ՝ բացված յերկու Մարդ: Ք)

Դրսում ձմեռ ե, ձերմակ յերեկո,
Ու ներս և ընկել լուսնի թեր կոր:
Գարուն ե ասես ծաղկել սենյակում,
Ժիր ժամացույցն ե պատից աղմկում:
Ու ցած և նայում պատից մի նկար՝
Յերեք ձիավոր, մի զի... մի անտառ...

2

Նստած՝ խորհում եր մայրիկն ալեղարդ,
Յերբ կարկաչելով ներս մտավ վորդին,
Մայրն ինչպես մի սար, իսկ տղան՝ զվարթ,
Առվակի նման փարվեց մոր սրտին...

Փարվեց... շողացին ծեր աչքերը մոր,
Բոցեր բարձրացան ճակատից նրա.
— «Մայրիկ պարզում տեսա յիս այսոր
Նկարն հայրիկին՝ մի դրբի վրա»:

Իմ ընկեր Սաքոն ասում եր, խնդում,
«Բայլշեկի հս չի յիշել հերը քո,
Դոր այգքան հիմի պարծենում ես զու.—
Ամեն տեղ ծեզից մինչեւ յիրեկուր»

* *

Ու յելավ մայրը, նկարն անտառի
Ցած առավ պատից ու տվեց վորդուն.
Մի պահ մայլից հայացքը բարի,
Ու տիսուր մի հուշ կյանք առավ որոսում:

Դիտում եր տղան նկարն անտառի.
Անտառում՝ ձմեռ, վչակում ծառի —
Ահա մի մարդու արնու ձեռ սառած,
Ցեղ բուքն և թռչում թհերը փռած...

Թառին՝ սասել և անտառի բադեն.
Բացատից հեռու՝ զոսադ, ասպագեն
Անցնում են, ինչպիս ձյան մըրթիք չոր —
Հայացքներն արյուն — յիրեր ձիավոր:

Իսկ նրանց հետեւ՝ կախված և անթարթ
Հսկա մի ծառից սեազեմ մի մարդ...
Ցուրտ քամին նրա պալանն և ճոճում
Որորվում և զին, վոնց լաստը լճում:

Քունքին՝ սասել են արյան յիրկու շիթ:
Ու մեզմ նայում և նկարն անժպիս:
— Մայրիկ, իմ հայրն ե, ինչու յին կախել
Մայրիկ... հառաչեց շիկաներ տղեն. —

— Կովի տարին եր, — առաց մայրը ծեր, —
Իսկ հայրդ՝ զնաց կարմիր զորքի հսու,
Կարմիր զորքի մեջ՝ կարմիր զրոշակ,
Վորսի աշեղից սլացող մի նսու:

Կովի զնացին հեղեղների պիս,
Իսկ հովիդ հայրդ պարձել եր գինկամ.
Կարմիր զորքի հսու թոշում հրակեղ
Կովում եր, ջարզում մինչեւ յիրեկու...

Կովելով առան բերգերը ցարի, —
Վոսի գահերը վոտնատակ արին...
Հայրդ՝ արյան մեջ խեղդեց թշնամուն
Բայց ավագ, նրան վերցրին գերի...

Ու տարան նըան գիշեր մի մթին՝
Մի մթին գիշեր բնտառը մտան՝
Յերեք ձիափոր, յերեք արնոտ ցին,
Յեկ բարձրացրին նըան կախաղան...

Իսկ մի նկարիչ — մի ջահել տղա,
(Կոր միշտ յեղել եր մեզ հետ մարտիրում) —
Նկարեց հորդ այսպես կախաղան
Հանված անտառում...

* * * * *

Ասաց մայրը ծեր ու թուակ սրտից
Սիրո, կարոտի մի խուլ հառաչանք:
Յեկ ինչպես թափվեն աստղերը յերկնից
Նըա աչքերից արցունքներ ընկանու

Իսկ տղան վորպես գաղաղած կորյուն
Հարձակվեց տիսուր պատկերի վրա.
Յեկ կախաղանից հայրը իր վորդուն
Կարծես շշնջաց: — «Ե՞՞ պատսիր, տղան:

Թող մնա, մնա, վորպես արնոտ հուշ,
Յես ընկա մեր նոր աշխարհի համար»:
Վորդին սթափվեց... զըդվանքով անուշ —
Համբուրեց, կախեց նկարը պայծառ:

Յեկ գորովանքով մայրիկը բարի
Շոյեց զանգըամազ գլուխը վորդու.
Պատից նայում եր նկարն անտառի
Յեկ մեծ իլիչի ժպիան եր հորդում...
Հայրական ժպիտ և ջինջ և բարի,
Ուր առկայծում ե վայլը պայքարի:

~~~~~

Յուղուն ձմեռ է: Ճերմակ յիրեկո,  
Խաղաղ փայլում են դաշտերն սպիտակ,  
Ու ձմռան այդ պարզ ծիծաղի ներքո՝  
Ծլում են ոբախ բողբոջներն հրակ:

Իմ սրտի գուռը բացել եմ վաղմաց,  
Հեռու յե ձմեռն հոգուս դռներից.  
Չե վոր դուան մոտ՝ լուսի հաղար խուրձ,  
Հաղար ջահեր են վասվում հույզերից:

Ո՛, այս յիրեկո սրտիս մեջ մտան  
Բանակները մեր զարնան ծիծաղով,  
Նրանց կուրծքն ինչպես լինեների շղթան,  
Շողում և կովի հաղթության շողով:

\* \*

Դրսում սարերը, ճերմակ վրաններ,  
Ճերմակ յիրեկոն փոփել և զրսում,  
Սիրտս սիրով լի, սիրտս անվիճեր,  
Արեներ ունի, հավետ չի մրսում:

ԶՄՈՒԱՆ ԻՐԻԿՈՒՆ

Դրսում սարերի ճերմակ վրաններ,  
Ճերմակ վարդերի զարունն և զրսում,  
Սրտիս պերճ հովտում ծաղկած մայիսներ,  
Ուր կյանքիս զարնան զետակն և հոսում:

Հիմա իջել և ձմռան յիրեկոն՝  
Զյունի սավանով տիրել ամենուր,  
Լցվել և սիրտս մի անուշ յիրզով  
Ու ծով հույզերիս հորձանքով փրփուր:

Յեղ այս իրիկուն, մի թովիչ վորոս,  
Ինձ և ավետում հաղթությունը մեր,  
Յեղ սրտիս վրա հաղար ասավոս,  
Հաղար արե և վասում անվիճեր:

Հուր կարստներով իմ թհավորված  
Մոքիս արծիվն և սլանում հեռու,  
Ուր ստեղծագործ կորովով վասված—  
Կյանքն և նոր թեր ու ժողուած...

ՀՄՌԱՆ ՅԵՐԵԿՈ

Սարեց իր աղեղն հանեց լուսնկան,  
Ինչպես աքլորի վիզը վոսկեռույն.  
Ու տեսավ ցածում դաշտերն անսահման  
Յեկ դյուղը՝ ձյունոտ լեռների զրկում:

Զմռան արծաթով ձորեսը լցվեց,  
Ու գաշտեն եյին ցոլցում ճերմակ.  
Ասես աշխարհի ցորենն աղացել՝  
Շամակ եյին տվել գաշտերում արձակ:

Թէ յերկենքն իրա վիթխարի մաղով —  
Իմ նոր աշխարհի ալյուրն եր մաղել,  
Չորեսը լցրել ճերմակ ծիծաղով  
Ու նրա փայլով դաշտը վողողել:

*(A)*  
ՈՒԻՐ ԵՐ ԳԱՐՈՒԽԵ

Զմռան իջավ Մասսի ճերմակ կատարից,  
Բանակ զարկեց դաշտերում.  
Զյան բանակի զորավարը՝ բուքն՝ հանդից—  
Նախիքներ և տուն բերում:

Սուլում և խուլ զորավարը խելագար,  
Ճոճում մարակին իր ձյունոտ,  
Ճերմակել են դաշտն ու սարերը մարմար,  
Մասսիւապատ լեռան մոտ:

Յեկ սարերը՝ ասես ճերմակ վրաններ,  
Իջևանը զոբքեցի.  
Բուքն և զուռում, Ճերմակ սասցե ովիճններ  
Ճերմակ փայլը դենքիրի...  
*(B)*

Գարունն մեր և զրել բանակն իր կանաչ,  
Ուր վրաններն իր թավիշ,  
Ուր են հավքիրն ու ջրերը կապուտաչ,  
Ու մոլ յերկենքն ակնապեց:

Ո՞ւը և կորել, մանուկների խաղերը,  
Գարնան արևն հրավառ,  
Դութանկորի հորովելն ու տաղերը,  
Մաղկափիթիթ հանդ ու ծառ

Ահա, մեր նոր, շող-աշխարհի կրծքի տակ—  
Վառ զարուն և աղմկում,  
Աւ յերգում ե, վասփում, վորպես արեգակ  
Գործարանում ու հանքում:

Իմ քաջաթե ընկերների աչքերում,  
Ահա տեսնում եմ յես վառ—  
Արեգակով պսակ կապած մի զարուն,  
Աւ վարչերը հրավառ

Եեվ ականջիս՝ ահա զվարթ աղմուկով,  
Զորքի նման յեռանդուն,  
Կարկաչում և զարուն անուշ իր յերգով,  
Խինդով լցնում շեն ու տուն:

Մաել և նա աշխատանքի նոյակապ  
Կամարների տակ վսեմ  
Ջրնդում ե, կովին տալիս ույժ ու թափ,  
Աշխատանքին՝ յերգ ու սեր:

\* \* \*

Զմեռն իջակ Մասսի ձյունոտ կատարից  
Բանակ զարկեց դաշտերում.  
Զյան բանակի գորպարը՝ բուքն հանդից—  
Գարնան կարուն և բերում:

ՀՅԵՐՎԱՌ ՈՐԸ Կուշականիտ.

ԶՅՈՒՆՈՏ ՅԵՐԳԵՐ

Սերում եմ արծաթ յերեկոն ձմռան,  
Յերբ վասվում ե ճոխ թոնիքն համայնքի.  
Յեզր լիքն են լինում գոմեքն ու մառան  
Ու մրափում են մատակն ու մաքին:

Ու յերբ ասլանը խոտի դեղի տակ  
Պառկած լսում ե վոռնոցը բուքի:  
Յերբ դոլ թոնը մոտ լսում եմ անհաղ  
Կանաչ հեքյաթը բացվող գարունքին

Ու յերբ թոնը մոտ հեքյաթ են ասում,  
Կարծես, խուլ հեռվից գարունն ե խոսում:

Արեց թույլ ե... շողերը՝ սարսուռ,  
Սարսուռ են վասում հողին ու ծառին.  
Արեց ծույլ ե... բայց, հողի ներսում  
Հատիկն ե մոռւմ զարնան ծիծառին:

Արեց թույլ ե... գաշտերը ճերմակ  
Ճերմակ արեն և հիմա սարսուռ.  
Արեց ծույլ ե... բայց, իմ կրծքի տակ  
Ջահել յիռանդի կարկաչող զարուն:

## ԶՆՀԱԼ Ե

Արեւ վասիկից, որը՝ վառ քուրա,  
Դաշտում փայլեցին բերկրանքի շիթեր.  
Փարնան ջինջ փայլը հողում հուրերաց,...  
Յեզ ամենուրեկը փոեց հույդ ու սեր:

Արեւ բարկ և Մեր համայնական  
Հողն և ծիծաղում, ժաղկում զնդոցով.  
Թնդում են խորունկ որերը զարնան,  
Բացդում արուներ, վորպիս կանաչ ծով:

Արեն անուշ և, — զարթնում և հոգիս,  
Լցվում է սիրտս ծիծառի կանչով.  
Յերկաթ նմույզը հանդ և զուրս զալիս,  
Վազդում հույզերիս արտերի միջով:

ՀԱՅՈՒՅՈՒՆ

38

## ԴԱՐՈՒԻՆՆԵՐ

Դարնան ամպերի բանակն անկանոն  
Լսոների վերջին խրամեերն առավ,  
Մթնեցին մի պահ յիրկինք, հորիդոն,  
Յեզ խուլ վորոտաց անտառը պառավ:

Ամենից վերն, ամպերի արքան՝  
Մռնչաց հանկարծ ու սուրբ ձգեց,—  
Կայծակը շողաց բորբ ու հուրերան  
Յեզ ամպի արքան հոնքերը կիտեց:

Հետո աչքերից մի հեղեղ պոկվեց՝  
— Գարունն իր արծաթ հույզերն եր մաղում.  
Արքան ամպերի բանակից ջոկվեց  
Հալվեց ձորերի հսկա զաղաղում:

Սարերից էջան ջրերը պլառը  
Ու մտան իրենց մեծ քրոջ ծոցը.  
Գետը յիլնում եր, պատռում հունը խոր,  
Վոնց զրայում են զորքերն ամրոցը:

39

Թետը քանդել եր լեռների գահը,  
Դաշտերը սրբել արժաթե ցողով.  
Փրփուրների տակ խեղդել եր ահը,  
Անցնում եր ահեղ ծափով, ծիծաղով:

\* \*

... Յերբ անձրեխց վերջ արևն և ծագում,  
Եերբ մեր կոկված է ծնում հաղթանակ,  
Սիրտս հույզերին զորքն և կուտակում  
Յեզ գետ են դառնում՝ աղբյուր ու վտակ:

Սրտիս կամուրջը գողում և, դողում,  
Յերբ հույզիս գետն և անցնում իր միջով.  
Մի հակա բոցով կուրծքս վողողում,  
Հողիս և լցնում անուշ կարկաչով:

Ու մտքիս նետը հեռու սլանում,  
Տեսնում եմ ահաւ հողուս աչքերով,  
Վոր նոր աշխարհն ինձ առաջ և տանում,  
Ուր վոր գարունն և նստում դարերով:

Յեզ հեղեղի պես թնդում և զգարթ  
Նոր կյանքը՝ շուրջն իր կակաչներ ու վարդ:

ԿԱՌԵՐ ԵՎ ՀԱՅ

40

## ՑԵՐԳԻՐ ՀՈՂԻՆ

### 1. ՍԵՎԱՆՈՒՄ ԵՆ ԴԱՇՏԵՐԸ

Զնեալ են Գարունը՝ վահանն արևի  
Առած իր բազին — անահ բարձրացավ...  
Լույս նիզակներով իր բոց աչքերի՝  
Յեկավ լեռներով, զաշտերով անցավ...

Հնակից թողեց բյուրավոր զծեր,  
Վորոնը կյանք առան ու կարկաչեցին.  
Վարանեց, փախավ և ձմեռը ծեր,  
Նստեց արժաթե Մասոի դաղաթին

(A)

Բացվեցին ուրախ, լույսը ծծեցին  
Հանդ, արոտ, արտեր ու սարեր հակա.  
Հողը ծիծաղեց, ահա յերգեցին  
Մեր բանակները՝ դաշտում արեկատ

ՀԱՅ

41

## 2. ՑԱՆՔԸ

Հանդը սհացավ... լիաբուռ ձեռքով  
Շաղ տվինք — շարքով վոսկու հատիկներ.  
Ինչպես գիշերը հսկա իր մաղով—  
Փռում և զուրջը բոցավառ աստղեր:

Թաշում են ծիերը, խրինջում ուրախ,  
Մաղփում և սերմի անձրեղ հողում.  
Հատիկն և ուռչում ու լուսաշաղադ,  
Սկադիմ, անափ հանդն և ծիծաղում...

## 3. ՄԻԼԵՐԸ

Արտերն այն ամուլ — վոսկի՛ յին քամում...

Ա լ ա գ ա ն

Թաշեց արեց ծիլերը հողից,  
Իր շողապայծառ, լույս մաղիկներով.  
Մփաց կանաչը, ծածանվեց հովից  
Արտերի թավիշ հորձանքը սիրով...

Շուրջը — թնդացող անսահմանություն,  
Ծիլերն են խմում շիթերը լույսի.  
Մովի պես մարմանդ ալիք են առնում  
Արտերը հստնող, արտերը հույզի:

Արտերը դարձան խնդության մի ծով, —  
Մեր վաշտերն անցան արտերի միջով:

## ԱՐԵՎԻՆ

... իմ բարի, իմ ջերմ, հալաղատ իմ մայր,  
իմ բարի արև յես քեզ իմ ոիրում,  
Քեզ եմ յերազել կարոտով անծայր,  
իմ խեղճ մանկիւթյան անլույս որերում...

Դու անմահ քամակ՝ իմ հոգու վոլորտ,  
Յես՝ վայրկյան... խակ դու՝ հավիտյան ճամբորդ...

Շռայլեր գինիդ իմ հոգու թասում...  
Ուր անմեռ կյանքի արեն և խոսում...

## ԱՐՏԵՐԻՆ

... Ձեզ, վնայիկ ասեմ, չեմ տեսել վոսկի,  
Հասկեր, արենի համբույրներն եք լուք,  
իմ հոգին թող ձեր սիրտը սողոսկի  
Ու լսեմ ձեր լույս — հանդեսն անապմուկ...

Արտեր, — արեներ՝ կենդան, իմաստուն,  
Ձեր լույսով պատեք ճամբաներ ու տուն...

իմ ուղեղում, յերադի պես սպիտակ  
Ցոլում ես միշտ ու բովբոքում միաքս թե՛ծ;  
Կոնց աշխարհում յերկիրն ե մեր՝ լույս միակ, —  
Այդպիս և զու անզուզական մի ջրվեժ:

Եիագարա, յես, քո տարերքն սպիտակ —  
Յերգի ժամեհն՝ զգում եմ իմ կրծքի տակ:

Ո՛, գարնան յերկինք, անհունի զու մայր,  
Արեգակների ոթեան զու վեհ, —  
Կայծակ-սրիրի զու գարնոց անծայր  
Խնդության ակունք ու յերգ առհավետ...

Դու յիշ ես աչքիս նման արտասվում, —  
Անձրե են կոչել քո ուրախ լացը,  
Քո արցունքներից վարդեր են ծնվում,  
Մաղիկներ անթիվ ու մեր կյանք-հացը:

Լաց, ուրախության զու մայր կենսածին,  
Ուր աչքիդ զունատ արցունքն ե ընկնում՝  
Այնտեղ փթթում ե մատաղ մի յերկիր՝  
Ու խաղաղ որվա արեն ե յերկնում...

ԱԶԱՏ ՅԵՐԳ

Աչքերը նուռ՝ աշունն իջավ,  
Թամենք գինի, գինի, գինի,  
Հին-աշխարհի լույսը շիջավ,  
Գինի, գինի...

Բաղ ու բաղչա վոսկի հագել...  
Թամենք ուրախ գինի, գինի,  
Անցածը ծեր՝ չի գա մեկել,  
Գինի, գինի...

Մեղքը շրթին իջավ աշուն,  
Սիրտս գինու մի զավ նախշուն,  
Խճճ քեփոր, — ինչ կլինի —  
Գինի, գինի...

Մաղկում և, ջան, կյանքը հկմե,  
Խմենք գինի, գինի, գինի,  
Նոր-աշխարհին բարե-բարե,  
Գինի, գինի...

ԴԻՆԻ

Թշնամու պես խորամանկ,  
Յեվ դուրեկան վարդի պես,  
Մեր խաղողի արներանդ  
Արու վորդին արևկեզ —  
Համբույրներով խնդադին  
Դար ու զարեր մեզ խարեց,  
Յեվ իմաստուն սուրբ վոսկին —  
Մեր դանդերից դուրս թափեց

ՄՏՈՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ

Հին աշխարհը չեմ տեսել,  
Ու վոչ մի բան չեմ հիշում  
Յեզ չեմ նրան յերազել  
Յես անցյալի մշուշում:

Բայց յերբ նայում եմ մի պահ  
Մորս դեմքին անմենիին,  
Ինձ թվում ե, թե ամա,  
Սահ, ե յեզել աշխարհն հին:

Հին աշխարհը չեմ տեսել  
Ու վոչ մի բան չեմ հիշում,  
Բայց թողել ե նա մի թել  
Մորս աչքի մշուշում:

Շողացին ու անցան զորքերը,  
Զինավառ զորքերը իմ հոգու.  
Զիերի յերկաթե վոտքերը  
Իմ սրտից կայծեր են պոկում:

Շողացին ու անցան զորքերը՝  
Կես աշխարհն արին վոտնատակ.  
Զիերի հրդեհված վոտքերը —  
Ճամբեքում. վառեցին կրակ:

... Կշողան, կսուրան զորքերը,  
Կրոնեն հողագունդն հոկա,  
Զիերի սրարշավ վոտքերը  
Կփռեն կայծակներ վոսկյատ

Զիերից վար կիշնեն զորքերը,  
Կմթնեն զենքեր ու զրահ,  
Կդոփեն ձիերի վոտքերը  
Բովանդակ աշխարհի վրատ

Յեկ արևն, ինչպես մայր գորովագութ՝  
Գրկել ե լեռները, ձոր, զաշտեր ու ծով.  
Հովս և թեածում ու անցնում զանցուր  
Արտերի միջով!\*

Հզվում ե հոգիս անհուն բերկրանքով, Դառաւ  
Դարսնան ծիծառն ե կրծքիս տակ յերգում.  
Արծաթ գետակի մարմանդ աղմուկով —  
Սարյակն ե բերկրում...

Ամուր գրկել ե լեռների շղթան  
Մանկշակագույն շղարշն ամպեցի.  
Ճածում արոտներ — կանաչ տեսարան,  
Ծովերն արտերի...

Լսում եմ ահա ձայները նրանց,  
Միտքս ճախրում ե յերկաթի փայլով.  
Վեր ե սլանում հոգիս թեաբաց —  
Հողի բերկրանքով...

Այնտեղ, յերկաթի դնդոցը ահա՝  
Հնչում ե, վորպես մի զանգակաղբյուր.  
Յեկ ջուրն ե փռվում մեր հանդի վրա,  
Վորպես վառ համբույր...

Յեկ յես յերգում նոր կյանքը փայլող,  
Դարսնան ե իմ մեջ ծիծաղում ահա,  
Զզում եմ նրա ուժը կենսաթով  
Յեկ սրտիս վրա... \*

ԱՐՏԵՐՆ ՈՒ ԱՐԵՎԼ

Արեն արտերի ծիլերը տեսավ,  
Արտերն արեին ծիծաղով հասան:

Ու մըզով հղի խնձորենու պես —  
Կռացան, իջան հասկերն արեկիդ:

Յել թնդաց վոսկե թմբուկը հանդի՝  
Կոմբայնը շողաց, շողաց գերանդին:

Արեն արտերում մեր հունձը տեսավ,  
Հունձը հորձանվեց, կալերը հասավ...

Ս Ա Ր Ե Ր ՈՒ Մ

(Պատկեր)

Սարերում իջավ մարմանդ յերեկո—  
Աստղերի անհուն ու խուլ զնդոցով.  
Կարծիս աստղերի որորի ներքո  
Քուն մտան սարերն ու աշխարհը ծով:

Սարերի վրա հոտը յերջանիկ  
Մրափի նստեց ահա կարոտով.  
Ոճախի շուրջը, հսկում են լոիկ,  
Հովվի հետ՝ հսկա շներն անվրդով:

Դիզեցին արտում  
Հունձը վոսկերանդ:

Ու քանի՛ կաթել  
Ճակատին շողաց,  
Բայց իր առնական  
Զեպը չդողաց:

Շուրջը՝ ծով-արտեր,  
Աստղեր ու լուսին, —  
Հերյաթ են ասում,  
Յերդում միասին:

Յերգում են ասես  
Բերքը կոլխողի,  
Վոր հեղեղի ոլես  
Գիտի դուրս հոսի:

Ու լեցնի վոսկով՝  
Ամբարները ծով:

### ԱՇՈՒՆՆ ԱՄԲԱՐՆԵՐՈՒՄ

Աշունն հանդիրում վոսկի յե մաղեր,  
Սարերը՝ կորած մեղ-մառախուզում.  
Հովիտներն արեն արնով և ցողել —  
Ու արյունը՝ մեր բերքն և վողոզում...

— «Աշնան վերջին որ» — յերգում և քամին,  
Բարեբեր որգա վերջին գնգոցով.  
Ջունը՝ սավանով փարվում սարերին, —  
Իշնում և ձմեռն ինչպես ճերմակ ծովի

Յեկ արծաթվում են կատարներն հեռու,  
Զի լոել ձորում զնգոցը ջրի.  
Մինչ մեր բարեբեր աշունը յիռուն —  
Հանգչում և սրտում մեր ամբարների:

\* \*

Լույսի շիթեր են նստել ճակատիս, —  
Լույսի շիթերով լցվում և հոգիս:

Դիզեցին արտում  
Հունձը վոսկերանդ:

Ու քանի՞ կաթել  
Ճակատին շողաց,  
Բայց իր առնական  
Զերքը չդողաց:

Շուրջը՝ ծովաբեր,  
Աստղեր ու լուսին, —  
Հերյաթ են ասում,  
Ցեղում միասին:

Ցեղում են առև  
Բերքը կոլխողի  
Վոր հեղեղի պիո  
Գիտի զուրս հոսի:

Ու լեցնի վոսկով՝  
Ամբարները ծովի

Առաջ առ

### ԱՇՈՒՆՆ ԱՄԲԱՐՆԵՐՈՒՄ

Աշունն հանգեցում վոսկի յե մաղել,  
Սարերը՝ կորած մեղմառախուղում.  
Հովիտներն արեն արնով և ցողել —  
Ու արյունը՝ մեր բերքն և վողողում...

— «Աշնան վերջին մը» — յերգում և քամին,  
Բարեբեր որքա վերջին զնգոցով.  
Ջյունը՝ սականով փարզում սարերին, —  
Իշնում և ձմեռն ինչպես ճերմակ ծովի

Ցեղ արծաթվում են կատարներն հեռու,  
Զի լոել ձորում զնգոցը ջրի.  
Մինչ մեր բարեբեր աշունը յեռուն —  
Հանգչում և սրտում մեր ամբարների:

\* \*

Լույսի շիթեր են նստել ճակատին, —  
Լույսի շիթերով լցվում և հօգիսն:

Զյունն և սարելըում՝ մանվում լույսի պես,  
Դաշտերը ցոլում՝ զարնան հույսի պես:

Յերբ և ծագելու արդին վարսագեղ —  
Նա յե բարախում հիմա սրտիս տեղ:

### Գիշեմզմա ժԱՄԵՐ

Մեր զյուղերն հոգտում ննջում են խաղաղ,  
Խչպես մանուկներն իրենց որոշքում.  
Որոր են կարդում աղբյուրները պատ  
Ռւ մարդարիտով դաշտերը ծածկում:

Դադալի ժամն և աստղելից ծորում,  
Վոր ծեղին նորից կռիվը շողա.  
Վոր լույսերի հետ ցորնի արտելում  
Համերի վոսկե անձրեներ տեղանուն:

Վոր փրփրահորձանք չըմեծների տակ  
Ջրացացները վորոտան թափով.  
Վոր այսուըի հետ հազար արեգակ  
Դյուղերը մտնեն խնդության ծափով:

ՀՈՎՎԻ ՍԵՐԼ

Մեր սարերի շուշանաբույր հովերը՝

Ծածանեցին հովվի սիրո ծովերը:

Սարի վրայ յերբ գիշերն ե որորվում,  
Լողանալով ջինջ աստղերի պարզ հովում, —  
Հովերն ուրախ հովվի շուրջը բոլորում  
Յեկ նա՝ հողով իրենց դյուզն ե ոլանում:

Տեսնում ջահել իր սիրատարի աղջկան,  
Նրա աչքի աղբյուրներից լույս խոնում,  
Խենթանում ե սիրտը նրա հովվական,  
Սիրո ահեղ սանդուխքներով բարձրանում:

Յեկ թնդում ե զգացմունքի գետն արծաթ,  
Խոխոջելով անցնում սրտի կամբջով.  
Յեկ սիրածի գեմքեց քաղցած յերկու վարդ —  
Հետ ե գալիս հովվի հողին կարկաչով:

Ու կարծես թի լուսանում ե սարերում,  
Հովվի աչքից՝ արեգակն ե բարձրանում:

Ու գալիս են զմբուխտ սարի հովերը՝  
Ալեկոծում նրա սիրո ծովերը:

Յեկ մթան մեջ հովվի աչքերը լազուր —  
Պապղում են, ինչպես յերկու վոսկե սուր:

Շունը պառկած՝ ստվերներն ե պրապում...  
Թուխ գառներն են շուրջը նրա խլոտում:

Գիշերն առած հսկա որոցքն աստղերի —  
Որորում ե՝ զրած լանջին սարերի:

Յեկավ լիցուն վոսկե տարին,  
Սրտիս ըերեց խնդություն,  
Դուռը բացեց մեր ամբարի  
Հասկե ցոլքով մասավ տուն:

Սիրտս ել ահա խանդավասկեց,  
Հիշեց որերն իր անցած,  
Յեզ հուշերիս ծովը փակեց  
Սրտիս արտում լայն ու բաց:

\* \*

Ամեն տարի մեր զոներով  
Բուք եր անցնում վայրենի,  
Խնչպիս խանն եր անցնում զյուղով,  
Կամ արնոտ զորքն իշխանի:

Ու կաղկանձում գայլի նման,  
Խուլ մլավում զոնց կատու,  
Մահով վոռնում շուրջը մեր տան  
Ու արշավում թոնքատուն:

Պաղ հեծում եր թոնիրը մեր,  
Տատիս նման կծկվում;  
Դրսում քամի, ձյուն ու ձմեռ,  
Կյանքն եր ձյունով ծածկվում:

\* \*

Իսկ յերբ հիմի բուքը ձմռան  
Սիրտ և անում մտնում ներս,  
Տեսնում ե միշտ մեր վոսկեման  
Թոնիրները հրակեց...

Ու չորեքթաթ, սմբած ահից,  
Դուքս և թռչում չար ու խենթ,  
Վոռնում ե թե — ռնոր Աշխարհի  
Թոնիրներիցն եմ փախել:

«Այստեղ արտն ե վոսկի մաղում,  
Համայնական հերկ ու հանդ,  
Յերգում ե կյանքն ու ծիծաղում,  
Դեմս պարզած հուր վահանտ.

Այստեղ մարդը կայծակ ունի  
Հոնքերի տակն — աչքի տեղ,

Զկան քերդերն իմ արքունի  
Վոչ ել տաճարն ու կանթեղու».

Դեռ սողում ե բուքը զըսում,  
Վտարանդի, մեղկ ու վորը,  
Մեր թոնիրներն ել չեն մըսում  
Իմ սրտի պես հըաբորբ...

### ՎԵՐՋԻՆ ԲԵԿՈՐԸ

Արփաշայ գետի ափին հնամյա  
Անցյալի փառքը հանդչում ե հիմա:

Իջել ե մամուտ գմբեթը վանքի,  
Իսկ խաչը՝ նման ժանդոտ թվանքի:

Տնքում են անձեն պատերը մամուտ՝  
Մի քար ե պոկվում ամեն առավոտ

Ցեկ Արփաշայն ել մոտակա ձորում՝  
Կարծես այդ վանքի մահերդն ե գոռում:

Ու խեղճ նայում ե արտերին թափից  
Վանքն, ինչպես մեռնող մի բու ակնապից:

Միում են շուրջը կոլտնտեսական  
Արտերը՝ վոսկի պատմուման հագած:

Թնդում ե շուրջը խորունկի, հաբազնատ,  
Արևն ե ծորում դաշտերում ազատ:

Կյանքը վոսկեղոծ շապիկ և հագնում՝  
Սրմում խնդրության բոցն և ահագնում:

Յեվ անոցնական ու տիուր մահով —  
Հանգչում և վանքը իր հին զրահով:

Մինչ մեր լուսակերտ ու նոր աշխարհում  
Վոչ մի քար հիմա բեկոր չի դառնում...

### ՔԱՀԱՆԱ

Թուրս յեկավ վանքից մռայլ ու խռով  
Թեվատ արծվի պես՝ անտեր քահանան.  
Դեմքից ձմեռն և կախել անվրդով  
Իր պաղ զենքերը — վոր շուտ մահանալ:

Յեվ քայլում և նա՝ հայացքով խափան —  
Պտրելով անցած որերի ճամբան:

ՄԱՆԿԱՆՀ

(Նվեր փոքրիկ բարեկամիս՝ ՄՅՈՒԴԻԿԻՆ)

Աչքերդ զույն առան կապույտ յերկնքից,  
Ու ճակտիդ տեսա արել անմար.  
Ո, մատաղ ընձյուղ, դալար ու անբիծ՝  
Մարմարի կտոր՝ նոր կյանքի համար:

ՓՈՔՐԻԿ Ա-ԻՆ

Դու զեռ մատաղ վարդենի  
Այս նոր ու ճոխ պարտեզում.  
Բացվել ե քո վարդը մի  
Թուփիդ զեռ ջուր և ուզում:

Կյանքն ե աղբյուրն անհատնում՝  
Ծծիր՝ բանած ակունքին,  
Վոր շուտ բացվեն իմաստուն  
Կոկոնները քո կյանքի...

ՎԵՐՋԻՆ ԱՇՈՒՂԲ

Աշուն պապի, աշուղ պապի,  
Սրտիդ սազից վիշտը թափի...

Շուրջըդ նայիր զու բաց աչքով,—  
Կյանքն ե յելնում ամուր մեջքով:

Սազ-քյամանչա՝ աշուղ պապի,  
Սազիդ լարը կյանքին կապի...

\* \*

Աշխարհը մեր հուր ե հագել,  
Վիշտ կոտրող սուր ե կապել:

Գարուն ե շուրջդ, հանդ ու արոտ,  
Զիա մի աչք՝ հացի կարոտ:

Սիրտգ սազ ե, աշուղ պապի,  
Սազիդ թելը կյանքին կապի...

*Եղանակ անը է ու մարդանոց  
Հոգագործ մասին ամրոց  
Այդ ամրոցի օր ու ուժ վեցից:*

ՏԱՐ ՀՐԱԺԵՑԻ

Առավոտյան հանդիպեցինք իրարու,  
Ուր աշունն եր մազել վոսկին իր թեթև,  
Զինակոչիկ եր նա՝ պայծառ մի զարուն,  
*Հոնքերի տակ վասել եր նա զույդ արև*

*Իմ աննման ընկերների շարքեց եր,  
Ու նրանց պես զվարթամիտ ու կայտառ,  
Հոգին՝ կրակ, սրտում՝ հույզի նոր բոցեր...  
Ճակատը՝ վեհ, կուրծքն ու մեջքը՝ յերկու սարւ*

— Կարմիր բանակ սիլտի գնամ այս գիշեր...  
Անաց: Դեմքին խաղաց անուշ մի ժողիտ.  
Արթնացըրեց սրտիս խորթում նոր հուշեր —  
Մանուկների խաղերի պես կինսախինդ:

— Մնաս բարձվ, զնալու յեմ այս գիշեր,  
Նորից ժատաց ու փաթաթվեց իմ վազով.  
— Կտրիճ տղա, կտրիճ ընկեր, կանաչ սեր,  
Յերթդ ահա, սիրտս յերգում ե հույզով:

— Արի, աչքիդ խմեմ ջահերը յերկու,  
Յեկ համբուրեմ ճակատը քո քաջարի...  
(Կարոսանքով համբուրեցինք մեկ-մեկու,  
Վոր մեր սիրո կըակն հավերժ չմարի)...

Դու նոր կյանքում յեղար զահան ու նիզակ,  
Այդպես գնա, այդպես մաս բանակում..  
Կամքով հյուսից հաղթանակի բոց պատկ,  
Հողով պայծառ, կտրիճի պես դարձիր տուն...

### ԱՂԱՎՆԻՆԵՐԸ

Աղամլիները կանաչ կալերում  
Ամեն առավոտ յերգում են խաղաղ,  
Մազող արեն և նրանց համբուրում,  
Թոցնում, տանում դաշտը լուսաշաղ...

Սիրոս նման և ծաղկած կալերին,  
Հոգուս կալերից, յերեկ առավոտ —  
Իր թեկն տալով թռափ Աղավնին,  
Մի փետուր թողած սրտիս կալի մոտ

ՅԵՐԵԿՈՆ

Յելա ծաղկոս սարերն ի վեր —  
Ծով հույզերից թևեր առած,  
Միծաղեցին արև, յեթեր՝  
Մարալդաղի դոշին փռված, —

Ուր անցյալի փոշին հոսում,  
Նորի ահեղ թափին և խոսում:

Հեռու լեռներից, աստղերի ճամբով  
Զմբուխտ սարերի յերեկոն իջափ;  
Դրկեց, համբուրեց արոտները ծով  
Ու ցածում փռված դաշտավայրը թափ:

Վոչխար ու նախիր տուն վերադարձան —  
Վերջալույսի հետ զվարթ ու անհոգ,  
Հովանոցն ուսին — գիշերն անսահման  
Վալսկոտ զողի պես նստեց ծնկաչոք:

Ու մի պահ թնդաց գյուղը պերճ հովտում,  
Նախրի բառաչով, աղմուկով զառան,  
Կիթը վերջացավ, ամեն գոմ ու տուն —  
Հոգնած մարդու պես հանգիստ քուն առան:

## ԶԴԱՑՄՈՒՆՔՆԵՐ

Պայծառ, վարդ ես փրփուր ես զու,  
Պայծառ՝ սիրո առավոտ.  
Սրտից յենոց մի հուր ես զու,  
Պայծառ, հուրդ սրտիս մոտ:

\*\*\*

Առավիտ ես,  
Վարդի հոտ ես,  
Պայծառ, մեր մեծ աշխարհում.  
Պայծառացած սրտիս մոտ ես,  
Սերդ՝ սրտիս ծալքերում:

~~~~~

ՊԱՐԵՐԴ

— Թե վոր սարերն հերկի գնամ գիշերով,
Ճամբես պատամ թե վոր լինի փշերով,
Դու ինչ կանես սևաչ աղջիկ կոմյերիս
— Արև դառած՝ լույս կլառնեմ յեթերից:

Թե վոր խոփը փըշըրվի մեր գութանի,
Հորովելիս ձայնն ել՝ սարում թե քնի,
Դու ինչ կանես, սիրուն աղջիկ սևորակի
— Եսն խոփ դառած կզընդամ սարի տակ:

— Թե վոր հասնի հնձի ժամը վոսկեցող
Ու չգտնեմ յես գերանդի ու մանգադ,
Ի՞նչ կպառնաս, սիրուծ աղջիկ մեր հանդին
— Թո կոներում սուր մաշինա, գերանդին

— Թե վոր արծաթի իմ զերանդու զնգոցով
Թո սերն առած՝ շուրջա փոեմ հասկի ծով,
Դու ինչ կանես, սևաչ աղջիկ խնդադիմ
— Թո սերն առած՝ վոսկի իրձեր կըկապեմ:

— Իսկ թե կովի որերը զան, շառաչեն,
Ու մեր կովող ընկերները մեզ կանչեն
Ի՞նչ կդառնաս, խիզախ աղջիկ, նրանց մոտ
— Հին աշխարհը հիմքից քանդող թնդանոթ:

ՆՈՐ ՈՐՈՐ

Ալագյազին ձյուն ե յեկել,
Հերըդ հանդից տուն ե յեկել,
Որոր ասեմ, — քնիր, անհւշ,
Թու աչերին քոչ ե յեկել:

Քնիր, քնիր, շուտ մեծանաս,
Կյանքի պայծառ գուռը բանաս,
Սուր ու վահան լինես կյանքում
Ու հայրիկիդ ճամբով գնաս:

Հայրդ աչքիս լույս ե բերել,
Մրտիս՝ վոսկի հույս ե բերել,
Թու աչքերի զույգ ջահերով
Նոր աշխարհին՝ լույս ե բերել:

ԱՐԴԱՍԱՎՈՐՈՒՄ

(Շիրակի կոլտնտեսական արտերում)

— Արտուրն ինչու մեր արտերում
Զագեր հանեց այս տարին
— Զե՞ վոր արան և զուկի ծորում,
Հորդում և ծովս հասկերին

— Հապա լինչու խեղվեցին
Արտուր ձագերն արտուտին
— Զե՞ վոր յելան, հեղեղվեցին՝
Ծով հասկերը մեր արտին

— Ինչու թռավ արտուան արտից՝
Թեղերն արնուտ մեր գնաց
— Զե՞ վոր արտում, մեր յելանդից
Հնձող մաշին դըրբնաց:

Ո՞ւր և հիմա արտուան անտուն,
Չի յերկում արտի մեջ:
— Նա ցորնի հետ մտավ մեր տուն
Ու յերգում և սրտիս մեջ:

ԱՂՋԻԿԻ ՑԵՐԳՈՒԽՄ Ե

— Սրտի բացված վարդը՝ հիմա,
Սրտով սիրած մարդը՝ հիմա,
Սիրած յարս՝ նոր-աշխարհում,
Նոր-աշխարհի զարդը՝ հիմա:

Աղատ աշխարհ ու սեր՝ հիմա,
Հին կյանքի դեմ սուսեր՝ հիմա,
Յարս աչքերն ես աշխարհում,
Նոր աշխարհի լույսեր՝ հիմա:

Անդարձ մեռնող չարը՝ հիմա,
Պայծառ կյանքի դարը՝ հիմա,
Սիրած յարս սոցիալիզմի
Ամուր հիմքի քարը՝ հիմա:

ՀՈՎԵՐՆ ԵԿԱՆ

Հովերն եկան սարերեն,
Խաբար բերին իմ յարեն, —
— Յարդ արտերն ե հերկում
Ու հորովել ե յերգում:

Հովերն եկան սարերեն,
Խաբար բերին իմ յարեն, —
— Յարդ զաերն ե վարել
Դուշմանի դուռն ե քարել:

Հովերն եկան սարերեն,
Խաբար բերին իմ յարեն, —
— Յարդ ցորեն ե ցանում,
Ծով արտերն ե տափանում:

Հովերն եկան սարերեն,
Խաբար բերին իմ յարեն, —
— Յարիդ քըտինքն ե վազում,
Հացը՝ ծով ե կոլխոզում:

Հովերն եկան սարերեն,
Խաբար բերին իմ յարեն,
— Յարդ հացով տուն կուղա,
Դաղբած աչքիդ քուն կուղա:

Հովերն եկան սարերեն,
Խաբար բերին իմ յարեն,
— Մեռնեմ յարիս թիկունքին,
Արկ աչքին, սև ունքին:

ՀՈՎԵՐՆ ԵԿԱՆ

Հովերն եկան սարերեն,
Խաբար բերին իմ յարեն, —
— Յարդ արտերն և հերկում
Ռւ հողովել և յերգում:

Հովերն եկան սարերեն,
Խաբար բերին իմ յարեն, —
— Յարդ դոերն և վարել
Դուշմանի դուռն և քարել:

Հովերն եկան սարերեն,
Խաբար բերին իմ յարեն, —
— Յարդ ցորեն և ցանում
Ծով արտերն և տափանում:

Հովերն եկան սարերեն,
Խաբար բերին իմ յարեն, —
— Յարիդ ըրտինքն և վազում,
Հացը՝ ծով և կոլխոզում:

Հովերն եկան սարերեն,
Խաբար բերին իմ յարեն,
— Յարդ հացով տուն կուգա,
Դաղբած աչքիդ քուն կուգա:

Հովերն եկան սարերեն,
Կարստ բերին իմ յարեն,
— Մեռնեմ յարիս թիկունքին,
Արև աչքին, ու ունքին:

Դաշտին վոսկի քող իջավ,
Սրտիս սերո շող իջավ,
Կոլխոդնիկ յարիս աչքից —
Արել հաղթող իջավ:

Ջուն և յեկել սարերին,
Քուն չի յեկել իմ յարին,
Ցար ջան, ձյունդ մի դնի
Սրտիս կրակ սարերին:

Սերը՞ քարոտ մի գետ և,
Ցարիս կարոտն ինձ հետ և,
Սրտի վրա դյուշմանի —
Ցես՝ աղեղ, յարը՞ նետ և:

ՄԱՐԱՂԱՐԻ ՄԱԶԿԱԼՆԵՐԻ ՅԵՐԳԸ

(Հատված «Մարալզաղ» պոեմից)

Ալազյաղի արծաթ գահից
Շագեց լուսինն սպիտակ,
Ու ձեն տվին աղմկալից
Դութանվորներն անգտակ
Սարի գոշին, լուսնի լուսով
Ցեղներն առաջ ընթացան,
Խոփերն իրենց հաղթ սրերով
Թմբերն արին ցիր ու ցանու
Սորոն, ահա, ահան նըանք,
Ահա ծոյակն իր խմբով,
Դլորվում են հաղթ ու արագ
Դութանները նոր թափով:
Ցեղներն արի ու կշտացած
Մեջք են տալիս ու քաշում,
Հոտաղները հպարտ նստած՝
Հա յերգում են ու քշում:
Ու մաճկալներն իրար մոտիկ

Ուրախ տվին հորովել.
Սարը դարձավ բազմապատիկ
Ակոսների անթիվ թել:

— Հեյ, հորովել,
Քեզ եմ գովել
Արտի միջին,
Մատաղ մաճին,
Տար իմ յերգի
Զայնը վճիտ —
Ստալինի
Սուր ականջին.
Ասա, վոր միշտ,
Ուրախ, անվիշտ
Հողն ենք հերկում
Ու քեզ յերգում,
Վոր մեր արտում
Ու մեր պրոտում
Հաց ունենանք,
Հարստանանք,
Ու վառ պահենք,
Ինչպես արեգ
Պերճ ու հզոր
Մեր կյանքը նոր:

— Հեյ, հորովել
Իմ սրտի թել,
Արտի միջին,
Մատաղ մաճին,
Տար իմ յերգի
Զայնը վճիտ —
Ստալինի
Սուր ականջին,
Ասա, վոր մեր
Զմբուխտ սարեր
Կանաչ հագան
Ու քեզ կ'ուզան...
Վոր աշխարհում
Ու մեր սարում —
Հաց ունենանք,
Ու ել ամբանանք,
Վոր աշխարհը
Ցեղնի վոտի,
Կապի կարմիր,
Կարմիր զոտի...

ԱՐԾԻԿ-ՍՈՐՈՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ Ե ԳՆՈՒՄ

(Հատված «Մարալգաղ» պոմելից)

1

Դեմից ցոլում և Ալապյազ սարը,
ինչպես արծաթված մի հոկա զմբեթ,
Դյուզը բռնել ե դիմացի դարը,
Ու մշտ զնդում և ազբյուրների հետ
Շուրջը՝ կալերի թափիշ զորդերը —
Հին կտուրներին՝ դեղերը խոտի,
Յեկ ինչպես կոկի մղող զոքերը՝
Դյուզում կոլխոզն և բարձրացել վոտի
Փերուզ-ջրերը անցնում են մոտով —
Դյուզում թողնելով բույրը Մանթաշի.
Գահից նայում ե իր սառ կարոտով
Ալապյազն — հենված ամպերի բաշին:
Յեկ ամեն գիշեր՝ աստղերն անքթիթ
Սարերի ուսին արծաթ են ծորում,
Լուսինն, ինչպես ժպիտը քրդուհու
Դյուզի գիշերն ե զրկած որորում...

Այնտեղ գոմերն են ահա բարձրացեր,
(Հանգչում և ցածում բեկորը վանքի) ...
Ու փոված հովտում, ինչպես գարնան ցել
Հոսում են կարծես հողերը ցանքի:
Հեռվում՝ տները ճերմակի, վարդագույն,
Ահա և Արծիկ-Սորոյի տունը. —
Շղթայված շունը՝ զիշերներն անքուն
Միշտ խանդարում և լուսնի սառ քունք:
Ահա բակի մեջ մի խարխուլ արոր,
Բնկել ե, ինչպես հավքի ջարդված թհ.
Հին սայլի կողքին բլրի պես կլու
Նստած խորհում և ամբըրոցը պարթի:
Գոմի սրահում ահա մի մառան, —
Լիքն և դաշտերի վոսկի բարեքով
Ու թուխ ամպի պես խմբերը գառան
Յեկ ուլիկներն են չոքել բերկրանքով:
Ծփում և մթնում բույրը մառանի,
Յուղը վոսկի յև զիզել կարասում.
Ու ինչպես նստած վոչխարներ քանի —
Պանը տըկերն են գեմ-դեմի խոսում...
• Ու գորոճում են յեղները գոմում,
Աղավաները՝ ննջում ոճորքին,

Յեղան ճակատին լուսինն և խաղում
Յեկ հալածում և մոռթը մսուբքի

3

Տանը ծորում և լույսի ծով—լամպը,
Ինչպես ոճորքից լիմոն մի կախված,
Վոնց Ալայազի գլխի լույս ամպը
Տունը փայլում և բերկանքով լցված
Մեր Սորոն ունի թխաչյա մի կին—
Իրենց Պանթաշի կաքավից ել գեղ.
Վոր միշտ գիրկն առած իր ջինք մանուկին
Աղբյուրի պես և զնդում ամեն տեղ.
Յեկ հիմա՝ բարձին մանուկին և ննջում,
Ննջում և Սորոն ջահել կնոջ հետ
Աստղերի մաղով գիշերը մաղվում
Փախչում և զանդաղ մշուշների հետ
Յեկ թագը պարզած հեռու աստղերին
Նիրհում և անթարթ Պապյազ սարը.
Խաղաղությունն և հալվող գիշերի՝
Ցած գրել գյուղում իր ձեռքի քարը:

4

Ծղտաց գոմում աքլորը թառից,
Ոճորքից թռան աղավնիները,—

Ասես բակի մեջ ձգված պարանից
Թափկեցին ճերմակ թաշկինակները:
Կովը բառաչեց զոմի խավարում,
Դուրս յեկավ Սորոն ու զոմը մտավ,
Դեղին վոսկեգույն հարդի մսուբում
Վերջին մի ծեղ և մնացել պհատ:
Յեկ Արծիվ-Սորոն ջրեց յեղները,
Խաղնելով կովը — կոլխոզի նախրին,
Բացեց կոլխոզի զոմի դռները,
Թիժ արագ հետո — իրենց բուխարին:
Կինը կուժն առավ, աղբյուրը գնաց,
Շարժը վեց տունը մանկան աղմուկով,
Դրսում բացվում եր հորիզոնը թաց,
Գիշերն եր փախչում միզոտ ձորերով:

* *

Տուն մտավ կինը ու Սորոն հաղթեալ
Սիդան բանալով, նստեցին հացի.
Մանկան աչքերի որերն անվրեալ
Հոր լայն ճակատին ընկած շողացին:
Կոսոջ աչքերը յերկինք բարձրացան՝
Գրկած իր մարդու ժպիտները պերձ,
Դուան ճեղքերից մեկից ներս ընկան
Ծագող արեի գարսերն հրաշեջ:

92

93

Յեղան ճակատին լուսինն և խաղում
Յեկ հայածում և մութը մսուցքի:

3

Տանը ծորում և լույսի ծով—լամպը,
Ինչպես ոճորքից լիմոն մի կախված,
Վոնց Ալազյաղի զլիսի լույս ամպը
Տունը փայլում և բերկրանքով լոյված:
Մեր Սորոն ունի թխաչյա մի կեն—
Իրենց Պանթաշի կաքավից ել գեղ.
Վոր միշտ զիրկն առած իր ջինք մանուկին
Աղբյուրի պես և զնդում ամեն անդ:
Յեկ հիմա՝ բարձին մանուկն և ննջում,
Ննջում և Սորոն ջահել կնոջ հետ:
Աստղերի մաղով զիշերը մաղվում
Փախչում և զանդաղ մշուշների հետ:
Յեկ թագը պարզած հեռու աստղերին
Նիրհում և անթարթ Պլազյագ սարը.
Խաղաղությունն և հալվող զիշերի՝
Ցած զրել զյուղում իր ձեռքի քարը:

4

Ծղրտաց զոմում աքլորը թառից,
Ոճորքից թռան աղաղսիները —

Ասես բակի մեջ ձգված պարանից
Թափկեցին ձերմակ թաշկինակները:
Կովը բառաչեց զոմի խավարում,
Դուրս յեկավ Սորոն ու զոմը մտավ,
Գեղին գոսկեցույն ճարդի մսութում
Վերջին մի ծեղ և մնացի պհատ:
Յեկ Արձիվ-Սորոն ջրեց յեղները,
Խառնելով կովը — կոլխոզի նախրին,
Բացեց կոլխոզի զոմի դռները,
Թիժ արագ հետո — իրենց բուխարին:
Կինը կուժն առավի, աղբյուրը դնաց,
Շարժվեց տունը մանկան աղմուկով,
Դրսում բացվում եր հորիզոնը թաց,
Գլշերն եր փախչում միզոտ ձորերով:

* *

Տուն մտավ կինը ու Սորոն հապճես
Սեղան բանալով, նստեցին հացի.
Մանկան աչքերի սրերն անվրեալ
Հոր լայն ճակատին ընկած շողացին:
Կնոջ աչքերը յերկինք բարձրացան՝
Գրկած իր մարդու ժպիտները պերճ,
Դռան ճեղքերից մեկից ներս ընկան
Ծագող արմի գարսերն հրաշեց:

Գյուղական թոնըի լավաշն — ինչպես լույս
 Շերտեր եր դիմել փոքրիկ սեղանին.
 Վոնց Ալադյաղի զլիսի ձյան մի հյուս
 Կարագը՝ բաղմել սեղանի գահին:
 Ու սեղանի հետ կրծիվը շողում,
 Նայում եր կնոջն ու իր մանկանը.
 — Վարդուշ ջան, ինձ են բնտրել, վոր գնամ,
 Մի յերկու որով կմնան տանը: —
 — Արեկիդ մեռնեմ, թե կուզես, գնա,
 Համագումար ե, ո՞ո մի կոփի չի...
 — Թե վոր կոփի ել լինի, կդնամ,
 Վոր միշտ վոտիս տակ կուլակն հառաչի...
 Ու խոսում եյին, մեկ-մեկու վրա —
 Իրենց հայացքով թափում հույզ ու սեր,
 Ու զրում զյուղի ազմուկն առորյա,
 Նախըի հետ ուրախ յելնում եր սարեր:

5

Պյուղում վառվեցին թոնիրները մաս,
 Քիշերվա հետքը սուզվեց Մանթաշում.
 Խուլ ծղբտալով, դաշտերով անծայր
 Անցնում եր զնացքն հեռու մշուշում: —
 Պյուղից բանվորներ յելան մի քանի, —
 Հեռու հանքերում զործը դղրդաց,

94

Մանթաշից յելնող վաղորդյան քամին
 Հովվին նվիրեց որինգներն իր թաց...
 Աղավլիները անցան կալերով,
 Ինչպես հողմի գեմ՝ ամպի մի քուլա.
 Օ Սորոն ուրախ իր ընկերներով
 Մանկանը զրկած տանից գուրս յելավ:
 Պյուղի բարձրունքից նրանց ժպտացին
 Ծաղող արևն ու Ալադյաղն արծաթ.
 Մարմանդ բացիկին արձակ ու անծիր
 իրենց արոտներն ու արտերն անթարթ:

6

Իրենց լեռների հզոր արծվի պես
 Ճած և իջնում նա լեռնական զյուղից.
 Ծափեր և տանում սրտով հրակեց, —
 Վոր խլեց յերեկ իրենց ժողովից:

Զմրուխտ սարերի գելիյուռն անձկալի
 Շղարշ և փաել հովտում, դաշտերում,
 Անվերջ խմբերգով պաղ ջրերն ելի
 Լեռներից հանդին համբույր են բերում:
 Անցնում եր Սորոն արտերի միջով, —
 Իրենց կոլխոզի արտերովս անափ,
 Դիմից հորիդոնն ինչպես լույսի ծով

95

(2) Զարկել եր սարին պատկն իր սաղափէ
 Կորել եր գյուղը՝ բլուրների տակ,
 Բարդիներն երին մենակ յերեռմ,
 Յեվ քայլում եր նա, կարոտում անհաղ,
 Լողում իր մտքի մըրկվող ծովում:
 Ու հանկարծ տեսավ՝ ծմակում ծառոտ,
 (Ուր միշտ հոսում և ջուրը խլածայն)
 Քըից քիչ հեռու, մի չոր ծառի մոտ
 Ահա մի ծանոթ քարե հուշարձան:

Մոտեցավ Սորոն՝ մոայլը զեմքին,
 Ու մի պահ տիտուր հուշերն արթնացան. —
 Հիշեց ընկերոջն, հիշեց ու կրկին
 Հոնքերն ամպի պես իջան, ծանրացան:
 Ու ջանել պատկերն իր լավ ընկերոջ
 Ուրվականի պես կանգնեց իր առաջ. —
 — Մարուքն եր, վոր քար Մարալդալը վողջ
 Իր հետ չորս զիշեր հերկեց անհանջ...
 Վերջին զիշերը սարն եր մնացել,
 Վոր գութաններն ու յեզները պահի.
 Բայց ժեզ նրա արնգի եր բացվել —
 Սուրն եր շողացել դադախ Մմբատի
 Սորոյի աչքից յերկու շիթ ընկան,
 Մուալիկց, ինչանու ամպամած պիշեր.

Կոլխոզն ե զյուղում կանգնել հաղթական,
 Ու քեզ սիրելիս, յերկար կհիշենք,
 Ասաց կարսոալ Մարալդաղ սարի,
 Արծիվ-մաճկալը ու քայլեց առաջ.
 Ծամակում թողած ընկերոջն արի
 Անցավ հայրենի գաշտերը կանաչ:
 Հեռվից նայում եր Ալազաղ սարը
 Վորպես ալեզարդ մի հին կոլխոզնիկ.
 Իսկ զիմից՝ ինչպիս անեղ անտառը
 Քաղաքն եր յենում, կանգնում անառիկ:
 Ուրիշ քաղաք եր Սորոն զնալու՝
 Ալազաղի սեզ բագեն վուկեմաղ,
 Յեվ գնացքն ահա իր թափին հլու.
 Թուավ նրա բոց կարոտով անհամ:

7

Զինջ և Յերկանն — հսկա, յերկնասույզ,
 Զնգում և խորունկ — արեին հասած.
 Օրտում ծաղկում և կյանքն աղմկահոյզ,
 Իր խայտաբետ թեկբը պարզած:
 Դեմից՝ ամպամած հասակը. (3)
 Զարկել և յերկու վրաններ ճերմակ.
 Սաղցի անապակ մի շղարշ ուսին,
 Այգիների ծովս առել թեկի տակ:

Ահա բամբակի քաղի պնացուգ
Վարսասաթ, ուրքուս խմբով աղջիկնեց,
Յերգում են նրանք, փայլում ինչպիս ցող,
Թռչոտում, ինչպես ժիր աղավնիներ:
Հոսում ե բույրը մրգի, խաղողի,
Այդին զամբյուղով քաղաք և մտնում,
Լույսի հետ հոսում բերկանքը հողի
Ու հացի փրփուը ժմիտն և հորդում...

8

Հեռվում, ծխաներ: Շենքը կարբիտ՝
Վոնց արևելքում արևի հրդեն,
Կարծես իր բոցով կլանե պիտի —
Շրջակայքն իրա ու դաշտերը թենու
Լայն փողոցներում թովչական ճիշով
Թրամներն, ինչպես լեռնական քամի —
Սլանում են հար քաղաքի միջով
Կծկելով արագ թելերը ճամբի:
Ու քայլում է գեռ Արծիլիս անվրդով,
Հույզերը սրտի բերդեն են քանդում.
Շուշը՝ խանդավառ մարդկային մի ծով
Գարնան ամպի պես առաջ և հորդում:
Պերճ այգիների զուզված պսակով
Նորքից Արարատ դաշտերն են հոսում:

98

Ու վիթխարաշին իրենց հասակով
Շենքերն արեի սիրտն են ակոսում:

9

Այզու մոտ ահա՝ շուքում ծառերի,
Սյունազարթ շենքի լուսավոր ու բաց
Վասեմ սրահում զարկը ծափերի
Ալիքների պիս փշրվեց-դնդաց:
Դեմից — Լենինի ժպիտն և ծորում,
Հանդես և կարծես մի խայտանկար,
(Համազումարն և խուլ ծափահարում)...

Ու ծլնդում և զանդակը յերկար
Դրոշներն ինչպես հրե ալիքներ
Ծփում են պայծառ ու անթարթ հոսում,
Պատի ժպտացող բազում նկարներն —
Սրտերի հետ են շշուկով խոսում:
Բանվորներ ահա, հողի մարդն հզո՞՝
Հեռու սարելից մեր պերճ-կուսական,
Մեր քաղաքներից, ձորից լուսածոր,
Գործարաններից ու հանքից յեկան...
Ցեկան՝ խանդավառ հերոսները մեր
Մեծ, կուսակցական անեղ բանակի,
Նրանց զեմքերին բացել և վարդեր՝
Ատեղազործող հուրն աշխատանքի:

99

Նըանք — բյուրավոր իրենց զիրքերում
Հաղթության քանի՛ կամար են կապել.
Յեվ հիմա նրանց բոցոտ սրտերում
Զիարշավի՛ յեն հույզերը յելել...
Յեվ ահա **Առողջ** նըանց մոտ նստած
Իր անցած ճամբի՛ պատկերն ուղեղում,
Լուսեմ ե, սիրալ խփում ե լարված,
Յեվ աչքերն առես կրակ են մաղում:

Ազգարարում ե զանգակը բեմից,
Սրահում յերկար-յերկար զողանջում,
Ընկեր **Աշուահն** յելնում ե գեմից...
Վորից ծափերի ջրվեժն ե դոչում:
Նորից թնդում ե զանլիճն հրավառ
Պէտքոծում ե ծովի պես յելնող, —
Ասես հանգեսում մի խայտանկար՝
Բեմ են սարժանում զորքեթը իրոխու:
Թվաց **Սորոյին** թե այդ ծափերից
Իր սրտին լույսի անձրե են մաղում:
Մինչ դեկավար խոսելով բեմից —
Հին կյանքի վերջին բեկորն եր թաղում
Նըա խոսքերում Ճիժաղում եյին
Սըտերը ցորնի դաշն համայնական,
Կոլխոզը յիսում կյանքի յերկունքում,

Ու տարածվում եր մկան առ մկան:
Նըա շրթներից թոշում եյին վեր
Լույսի՝ հրաբաշ հսկաներն անքում,
Վորոնց աչքերից ցերեկ ու գիշեր
Արշալույսներ են բոցով բարձրանում:

Գնում եր հեռուն՝ դեկավարը մեր
Վայրի, կուսական ձորերը մտնում —
Լույսի սյուներով զառնում անվեհեր —
Շողում եր, ինչպես կայծակը մթնում:
Թուխ գանգուրները մրոկվում եյին,
Յեվ հոնքերի տակ արեն եր ծաղում,
Ամբոխվում եյին նըա շրթներին
Հաղթանակները մեր պայծառանուն:
Ու միշտ մետաղի խորին զնզոցով
Յելնում եր ձայնը այդ պայծառ մարդու...
Դեմը ցոլում եր աչքերի մի ծով —
Յեվ դիմքեր, դիմքեր առնական, հօրդուն...
Խուլ վորոտում եր վսեմ սըտերը
Մեր դեկավարին՝ լենին եր ժպտում:

10

Նորից զընդաց զանգակը՝ բեմից,
Սրահը կրկին ծվաց, վորոտաց, —

Ցերք մի բանվորի խոսքի հետևից՝ հայուսն է
Խոսք առավ Արծիվ-Սորոն գլխաբացեալոց աղմ
Ուրախ հայում եր նրան թիկունքից՝ կայուն
Քնկեր ԱղԱՍԻՆԻ Սորոն կարկաչումը ։ կայուն
Քրտնքի ցողն եր սրբում աչք ունքից
Ու սրահի մեջ ձենն եր զողանջումը
— «Չորան և յեղել մեր տոհմը հնուց,
Ու մեր սաղերում անուն չե թողել, թայուն
Թացով ու չորսվ ապրելով մանկուցից ։ կայուն
Նոր կյանքին հասած սիրտս և վողողվելու ։ կայուն

— Ալադյազի պես՝ մեջքը կոլխոզի ։ կայուն
Վոչխարի հոտն և բռնել ձոր ու սար, կայուն
(Քարին և առնում մեր խոփը բազի) ։ կայուն
Բայց հիմի վողջ ենք — նոր որփա համար ։ կայուն

— Մեր կոլխոզն հիմի արագ մեծանում՝ կայուն
(Կաղուց և յերկրին պարտքերը տվել) ։ կայուն
Ցանքսի գործերն ել հաջող են գնում, կայուն
Ցեղ ամբարներում բերքն և կարմըրելու ։ կայուն
Մարարդադ սարը՝ բարձր, մշուշում, կայուն
Ցեղ վոչ մի արոր գոշը չեր քերծել.
Գյուղի մեջ մենակ տեսակըն եր հիշում, կայուն
Դոր «Առւրբ Մարգիսն և եղ հողն անիծել» ։ կայուն

Ասաց, ձիժաղից քեմում սթաբացը ։ կայուն
Ու նորից խոսեց չեղտերով արի, կայուն
— Ցերկը զույզ զունչ ու յիղներ լծած ։ կայուն
Զորս զիշեր զոշը սկացըինք սարի...
— Գյուղում դղբաց յոլն որ, յոթ զիշեր ։ կայուն
Մեր բերքի բաշխման մեծ հարսանիքը ։ կայուն
Ամբարի գուուը ենակնու են մաշել ։ կայուն
Միշտ անց ու զարձով մեր կնանիքը ։ կայուն
Ու զրա համար մեր ամբարներում ։ կայուն
Մեր հացն ու սերմն են հիմա հեղեղվել ։ կայուն
Կոլխոզի համար մուակի կալերում ։ կայուն
Ցերկու մեծ զոմ ու տներ ենք շինել...
Սարերում կյանքն և մեր հալստանում, կայուն
Մեր գյուղն և դասել մի հոկա փեթակ, կայուն
Մոռւրում վոչ մի հոտազ չի քնում ։ կայուն

— Կոլխոզի համար տրախոռն ենք ուզում, կայուն
Ցես քեզ եմ դիմում, ընկեր ԱղԱՍԻ, կայուն
Ել վարի համար չըտանջինք իզուր, կայուն
Թող մենք ել հասնենք եղ մեծ մուրազին ։ կայուն
Ասաց ու նայեց նա զիշելավարին, կայուն
Ու զիշելավարը սրտագին ժպտաց, կայուն
Խնչպես արեւ Ալազյաղ սարին ։ կայուն
Ցանի շողերն իր ու համբույրը տար:

Ապա վար իշավ Արծիվը այն սարի.
Նոր կոլխողնիկներ ամբիոն բարձրացան,
Խոսքերումն իրենց հաղթություն, բարիք
Ու կոլխողական արտերը դեղձտն:

11

Հեռու մշուշում հորիզոնի տակ
Կորել և Մասսի սիլուետն արդեն,
Շիրակի գաշտն իր բացվում բովանդակ
Արծիվ-Սորոյի բիլ հայացքի դեմ:

Յեվ քայլում իր նա: Ահա զիմացից
Զինջ Ալագյաղի վահանը շողաց,
Համբույրներ բերեց հովը գաշտերից
Ու ծաղկանց բույրով յերեսին խաղաց:

12

Հեռվից բարձրացան ու յերեացին
Գյուղի ծասերի մութ կտառքները,
Ապա մշուշում աղոտ շողացին
Կոլխողի խոտի հովա զեղերը
Իսկ շուշանագույն սարերի լանջին,
Իրենց կապտորակ, ծաղկոտ Մանթաշում,
Ինչպես չորանի-են թուխ յափնչին՝

Վոշխարի հոտն եր փախած արածում:
Յեկ շեկ կալիբրի աղմկումն յնուռն —
Հալվից Սորոյի յերգի ձայնը խուլ:
Ու վոստնում ելին զվարթ թավառուն —
Իրենց բակի մեջ — զառնուկներ եւ ուլ:

Բնից տեսնելով իր լավ տիրոջը,
Դուրս թսավ շունը ու ձգեց շպիան.
Յեվ որպեկով ոճաձկ պոչը
Կլանչեց ուրախ, մի քանի բերան:
Սորոն մոտեցավ ու զրկեց նրան,
Շոյեց թավամադ, խելոք զլութը.
Դասն ճեղքերից մոտիկ թոնբատան —
Դանդաղ յելնում իր կապտորակ ծուխը:
Ծվարել ելին հավերը բակում,
Ազավախները՝ նստել տանիքին.
Խաղաղության մեջ արեն իր յերգում,
Վոսկի յեր ցանում լիների քունքին:

1933—34 թ.

104

105

Тех. ред. И. Карамян
Супер-обложка и переплет
С. Аладжалова

Ованес Шираз
„ВЕСЕННЕЕ“
(на армянском языке)

Отпечатано в тип. Госиздата ССР Армении.
Москва, Армянский пер., 2. Заказ 1506.
Главлит № В—41889. Изд. № 3155. Тир. 3000.
Сдано в наб. 27 |Х-34 г. Подп. к печ. 11 |I-35 г.
Печ. 3 л. 10 стр. В. 1 п. л. 55 552 зн.

ՀՀ Ազգային գրադարան



NL0363201

97702